ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/03, 22.01.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ

Պատվիրատու՝ «Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Դեղորայքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած համարելու կամ թիվ 1.1 հավելվածը շտկելու հնարավորություն տալու և գնման ընթացակարգը շարունակելու մասին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Ֆինանսների նախարարության

Գնումների բողոքարկման խորհրդին

Ա/Հ Անահիտ Հակոբյանից

Ք.Արտաշատ,Օգոստոսի 23-ի փ, 41/44

ՀՎՀՀ 47768292

Դիմում-բողոք

Սույն թվականի հունվարի 15-ին ժամը 12:00-ին Արարատի մարզի Ազատավան գյուղի <<Ազատավանի ԱԱՊԿ >>ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված է եղել ԱՄԱԱ- ԳՀԱՊՁԲ -20 /1 ծածկագրով Ազատավանի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի դեղորաքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցում,որտեղ որպես մրցույթի մասնակից հանդես եմ եկել նաև ես Ա/Հ Անահիտ Հակոբյանս:Գրանցամատյանում գնումների համակարգողի կողմից գրանցվելուց հետո մասնակցել եմ մրցույթին,ծրարը բացելուց հետո համակարգողը բացահայտել է որ ինձ մոտ պակասում է Հավելված 1.1-ը,սակայն ինձ հնարավորություն չի տրվել տվյալ փաստաթուղթը նիստի հանձնաժողովի որոշմամբ Հաշխատանքային օրվա ընթացքում շտկելու /Կառավարության որոշում 04.05.2017թ-ի 526-Ն որոշման 41-րդ կետի՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները/ և փոխարենը համակարգողի կողմից բառացիորեն ասվելէ ,որ ես համարվում եմ պարտված տվյալ մրցույթում 1.1 Հավելվածի բացակայության պատճառով : Տվյալ մրցույթում գնային առաջարկի համեմատում չի եղել 3 մասնակիցներից որևէ մի մասնակի մոտ և միանգամից նախապտվություն է տրվել այն մասնակցին ում մոտ Հավելված 1.1-ը եղել է:Մրցույթը անցկացվել է բազմակի խախտումներով,որից հետո բացված փաթեթը գնումների համակարգողը վերադարձրել է ինձ:

Տեղեկացնում եմ ,որ նույն ծածկագրով/ ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1 /մրցույթ է հրապարակել նաև ՀՀ Արարատի մարզի Արևշատի ԱԱՊԿ, ՊՈԱԿ -ը:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում տվյալ մրցույթը համարել չկայացած կամ հնարավորություն տալ 1.1 Հավելվածը շտկելու և մրցույթի ընթացքը շարունակելու համար:

Կից ներկայացնում եմ բողոքը ներկայացնելու համար պահանջվող վճարի անդորրագիրը:

Կանխավ շնորհակալ եմ.

Հարգանքներով՝ Ա/Հ Անահիտ Հակոբյան

22.01.2020թ. Հեռ.094602683